ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական –քաղաքական կյանքը 1991-2001թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Վարդուհի Սիմոնյանի «ՀՀ հասարակական–քաղաքական կյանքը 1991-2001թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Երրորդ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին անկախության առաջին տասնամյակում: Ատենախոսության թեման իրոք արդիական է և հետազոտության արդյունքները կարող են ուսանելի լինել մեր ժամանակների համար:

Ցանկացած ատենախոսության հաջողության առաջին պայմանը ուսումնասիրության թեմայի ճիշտ ընտրությունն է, այնուհետև՝ հետազոտության խորությունն ու համակողմանի ամբողջականությունը, ինչպես նաև կատարված աշխատանքից արված հիմնավոր հետևությունները: Այս առումով, կարծում ենք, հաջող է ընտրված ատենախոսության թեման, քանզի առանց այդ խնդրի լուսաբանման ամբողջական չի կարող լինել ՀՀ պատմությունը: Հեղինակն առաջիններից մեկն է, որ գիտական շրջանառության մեջ դնելով տարբեր նորահայտ փաստաթղթեր, ինչպես նաև փաստագրական պատմագիտական գրականություն՝ փորձ է արել համադրական պատմաքննության ենթարկել ՀՀ անկախության առաջին տասնամյակում տեղի ունեցած հասարակական-քաղաքական գործընթացների պատմությունը:

Ատենախոսության հեղինակը կարողացել է պատշաճ ուշադրություն դարձնել վերոհիշյալ հարցերին և աշխատանքի տարբեր հատվածներում ու հատկապես եզրակացության մեջ կատարել հիմնավորված վերլուծություններ և հետևություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված են հետազոտության արդիականությունը, գիտական նորույթը, ատենախոսության նպատակները, խնդիրներն

ու գիտագործնական նշանակությունը, ներկայացված է թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Այստեղ հարկ ենք համարումը հեղինակի ուշադրությունը սևեռել այն, մեր կարծիքով կարևոր հանգամանքի վրա, որ ատենախոսությունում հստակորեն ձևակերպված չեն մեթոդաբանական մոտեցումները: Կարծում ենք վրիպակ է նաև այն, որ բուն ատենախոսությունում խնդիրներն ու նպատակները 8 կետից են բաղկացած, իսկ սեղմնագրում դրանք 7-ն են:

Ուսումնասիրության առաջին գլուխը նվիրված է ՀՀ հասարակական- քաղաքական կյանքին 1991-1996թթ.: Այն բաղկացած է չորս ենթագլխից, որոնցում ներկայացված են ՀՀ անկախության հռչակագիրը, Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումը և կառավարման նոր համակարգի ձևավորումը, ժողովրդավարացման գործընթացները, մասնավորապես ՀՀ առաջին Սահմանադրության ընդունումը և առաջին նախագահական ընտրությունները: Հեղինակը բավականին մանրամասն ներկայացնում է ՀՀ անկախության հռչակագրի ընդունման պատմությունը, հիմնական տեղը հատկացնելով ժամանակագրությանը(անգամ նշելով հռչակագրի ընդունման ոչ միայն օրը, այլև ժամն ու րոպեն-էջ 39): Գնահատելով ՀՀ անկախության հռչակագրի կարևորություն քաղաքական կյանքի հետագա զարգացումների համար, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն Հայստանի հասարակական և հատկապես քաղաքական կյանքի մասն է, ուստի, ավելի նպատակահարմար կլիներ, եթե՝ ներկայացվեր երկրորդ ենթագլխի հետ՝մեկ ենթագլխում: Ընդհանուր առմամբ, հեղինակը բավականին հանգամանալիորեն և գիտական պատշաճ մակարդակով է անդրադառնում տվյալ ժամանակահատվածի քաղաքական իրադարձություններին: Հաջող է ներկայացված առաջին նախագահական ընտրությունները, որոնցում նկատելի է վերլուծական մոտեցումը:

Երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է ՀՀ հասարակական-քաղաքական իրադարձությունները 1996-2001թթ.: Այն բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում տրվում են հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությունը, 1998թ, քաղաքական ճգնաժամը և հասարակական-քաղաքական

կյանքի նոր զարգացումները: Այստեղ, հատկապես հաջողված է երկրորդ ենթագլուխը, որտեղ անդրադարձ է կատարվել ՀՀ քաղաքական ճգնաժամի խորացմանը և 1998թ, իշխանափոխությանը: Դրան են նպաստել հեղինակի կողմից օգտագործված արխիվային նորահայտ փաստաթղթերը և այլ նյութերը:

Աշխատանքի վերջում ատենախոսը կատարել է մի շարք եզրակացություններ, որոնք կարևոր են հետազոտված թեման ներկայացնելու և նրա արդիականացումը ցույց տալու տեսանկյունից: Ատենախոսության եզրակացությունում ձևակերպված հետևությունները և ընդհանրացումները փաստարկված են, աչքի են ընկնում տեսական հիմնավորվածությամբ: Դրանք արդիական են և կարող են հանդես գալ որպես ինքուրույն մոտեցում:

Ատենախոսությունը գրված է պատշաճ գիտական լեզվով, առկա է հեղինակի պատմագիտական մտածելակերպը:

Վ.Սիմոնյանն առնչվելով բավականին բարդ և բազմաբովանդակ խնդրին կարողացել է կիրառել գիտահետազոտական աշխատանքներին առաջադրվող տեղեկատվություն և փաստերի վերամշակման ու ընդհանրացման սկզբունքները, ինչը վկայում է այն մասին, որ ատենախոսն անհրաժեշտ ունակություններ ունեցող մասնագետ-հետազոտող է:

Վ.Սիմոնյանի «ՀՀ հասարակական–քաղաքական կյանքը 1991-2001թթ.» թեկնածուական ատենախոսության մեջ բացի վերոնշյալից, տեղ են գտել նաև մի շարք թերություններ և վիճելի մոտեցումներ, մասնավորապես.

1.Մեր կարծիքով, աշխատանքի վերնագիրը հուշում է, որ հետազոտության օբյեկտը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքն է, ուստի հեղինակը, բացի քաղաքականից՝ պետք է ավելի մեծ տեղ հատկացներ նաև հասարակական կյանքի դրսևորումներին:

2. Կարծում ենք, որ 1-ին գլխի 2-րդ ենթավերնագիրն ավելի ճիշտ կլիներ ներկայացնել որպես կառավարման համակարգ և ոչ թե իշխանության համակարգ:

3. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ավելի շատ օգտագործեր հետխորհրդային պատմությանն ու քաղաքականությանը նվիրված Ռուսաստանի և Հայաստանի, հատկապես քաղաքագիտական աշխատություններն և այլ հետազոտություններ, ինչը հնարավորություն կտար ավելի հստակ մոտենալ հետազոտվող խնդիրներին: Օրինակ, հեղինակը գրեթե չի անդրադարձել սոցիալական շերտավորման հարցերին, ինչը մեծ ազդեցություն է ունեցել հասարակական և քաղաքական կյանքի վրա հետխորհրդային երկրներում(Տես, օրինակ, Политический процесс: Основные аспекты и способы анализа,под ред. Мелешкиной Е.Ю., М., 2006, Смолин О.Н., Политический процесс в современной России, М.,2006, Ա.Մանուկյան, ժամանակակից քաղաքական գործընթացներ,Եր. 2011 և այլն):

4. Աշխատությունում, մեր կարծիքով կան մի շարք վիճելի մոտեցումներ: Օրինակ, որ ՀՀ նորագույն պատմության սկիզբը դրվեց կոմունիստական վարչակարգի դեմ պայքարով: ՀՀ նորագույն պատմությունը սկսվել է Ղարաբաղյան շարժումով, որը մինչև 1990-ի կեսերը, որևէ հակապետական ուղղվածություն չուներ: Կամ, հաջորդ էջում նշվում է, թե ԽՍՀՄ բարեփոխումները չէին կարող մշակվել և իրականացվել, քանի որ դրանք մշակվել և իրականացվում էին կոմունիստական կուսակցության կողմից: Հարց է առաջանում, իսկ ինչու Չինաստանում դա հնարավոր էր և իրականացվեց, իսկ ԽՍՀՄ-ում՝ ոչ:

5. Հասկանալի չէ, թե ինչ նոր դասի մասին է խոսք գնում, երբ նշվում է,նոր Հայաստանի կոմկուսի կենտկոմը այլևս լեգիտիմ և մեծամասնություն կազմող նոր դասի կամքի արտահայտիչը չէր ընկալվում: Այդ հարցը կբացատրվեր, եթե հեղինակն անդրադառնար հետխորհրդային շրջանի սոցիալական նոր շերտավորումներին:

6.Հեղինակը որոշակիորեն գերագնահատում է «Դաշնակցություն» կուսակցության դերը նորագույն ժամանակներում՝ համապատասխան մոտեցում ցույց տալով «Դաշնակցություն» կուսակցության փակման և նրա ղեկավարներից ոմանց ու «Դրո» կազմակերպության դատավարությունների առթիվ (էջ 92,143-147): Այստեղ տեղին է

հիշեցնել, որ «Դաշնակցություն» կուսակցության ձերբակալված որոշ ղեկավարներ և «Դրո» կառույցի ներկայացուցիչները զինված դիմադրություն էին ցույց տվել իշխանության մարմինների ներկայացուցիչներին, իսկ որ ավելի կարևոր է՝ նրանց դատապարտված ղեկավարները չեն արդարացվել, այլ ազատ են արձակվել իրադրության փոփոխության կապակցությամբ, իսկ «Դրո» կառույցի ներկայացուցիչները մինչ օրս կրում են իրենց պատիժները: Այստեղ, թերևս տեղին է ավելացնել էջ 91-92-ում Օ.Կալուգինի «վկայությունը» դաշնակցության մասին: Օ.Կալուգինը ԽՍՀՄ-ից փախած հայրենիքի դավաճան է և վստահել նրա անաչառությանը, առնվազն միամտություն է: Օրինակ, նրան վկայակոչելով նշվում է, թե 1980-ականներին Դաշնակցությունը դադարեցրեց պայքարը խորհրդային իշխանության դեմ Հայաստանում, երբ վաղուց հայտնի է, որ 1930-ականի սկզբներին Դաշնակցության համագումարում որոշում էր կայացվել որևէ գործողություն Խորհրդային Հայաստանի դեմ չիրագործել Հայաստանում և արտասահմանում:

Այնուամենայնիվ, Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական – քաղաքական կյանքը 1991-2001թթ.» ատենախոսությունը համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու համար առաջադրվող պահանջներին և հաջող պաշտպանության դեպքում հեղինակն արժանի է Է.00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ս. Մանուկյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝ բ.գ.դ., դոցենտ Մ.Վ. Հովհաննիսյան

«11» 12. 2023թ.